

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի  
տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին

TESADASHT.am լրատվական ծառայություն

/Էլ. Հասցե՝ [info@tesadasht.am](mailto:info@tesadasht.am), հեռ՝ 094-43-33-92/

### *Տեղեկություն ստանալու հարցում*

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկությունները .

1. ՀՀ Արագածոտնի մարզպետարանի առաջիկա ծրագրերում արդյոք ներառված է ՀՀ Արագածոտնի մարզի Բազմաբերդ-Կաթնաղբյուր ավտոճանապարհի վերանորոգումը :
2. Եթե այո, ապա ե՞րբ կվերանորոգվի (մեզ հասած տեղեկությունների համաձայն վերանորոգումն արդեն իսկ սկսվել է, համապատասխանում է այս տեղեկությունը իրականությանը):

Կից նյութը՝ <http://tesadasht.am/hy/news/1455> :

Կանխավ շնորհակալ եմք՝

TESADASHT.am

09 հուլիսի 2013

**TESADASHT.am** լրատվական ծառայությանը

„Բազմաբերդ-Կաթնաղբյուր ճանապարհն անմխիթար վիճակում է, հոդվածի վերաբերյալ եւ ելնելով տեսանյութից, տեղեկացնում եմք, որ Արագածոտնի մարզի Բազմաբերդ-Կաթնաղբյուր ավտոճանապարհը Երեւան-Գյումրի-Վրաստանի սահման միջպետարական նշանակության ճանապարհի մի հատվածն է եւ գտնվում է ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության ենթակայության ներքո: Նշենք նաեւ, որ

հիշյալ ավտոճանապարհով անցնելու է Հյուսիս-հարավ մայրուղին, եւ այդ ծրագրի շրջանակում առաջիկայում այստեղ նախատեսված է փոսային նորոգումներ կատարել:

ՀՀ Արագածոտնի մարզպետարան